3. Այստեղ շինում են մի մեծ փայտածածկ տուն. «Մի օր գերաններից մէկը ... ուժեղ ճաճռոցով կոտրուելով՝ քաշ է ընկնում, և ամենքը ... գոռում են.—Սո՛ւն բերէք, սո՛ւն ... Մգրոն, որ ամենից բարձրահասակն էր, ... ձեռքը վեր բարձրացրած գերանին դէմ տալով՝ ասում է. Ես «Մսա-սուն»: Ամենքն էլ ասում են Մգրոն «մսա-սուն է, մսա-սուն», որից վայրը անուանւում է Մսա-սուն, այսինքն մսէ սիւն, որից ծագել է «Սասուն»: Այս զրոյցի մասին մինչև իսկ երգում են.

Տունըմ շինինք գիտու բիրան, ջանիման, ջանիման.
Վրէն թալինք ջուխտմ՝ գերան ջանիման, ջանիման.
Մէկն էր խոխի մէկ լը ծիրան ջանիման, ջանիման.
Խոխին կոտրաւ մնաց ծիրան ջանիման, ջանիման.

4. «Թորոսը Կիլիկիոյ իշխանական տոհմերից մէկի շառաւիղը լինելով ԺԵ.-դ դարու կէսերում, Լևոն Զ.-ից յետոյ ... մի խումբ մարդկանց գլուխն անցած՝ վերջին անգամ հրաժեշտ տալով Կիլիկիային՝ հեռացաւ, եկաւ Սասուն: ... Թորոսն է եղել գաւառիս իշխանն ու պետը ... ամենքին էլ հաւասարապէս դատել: ... իսկ ժողովուրդը ... նրան մինչև այն աստիճան է յարգել, որ «Պապ» տիտղոսն է տուել և այն աստիճան սիրել, որ բոլորն էլ նրա գլխով են երդուել ու ասել—«Մըր պարու հըւագ», Մըր խօր պարգա գլոխ»: Եւ այսպէս երդւում են աւելի Խիզանցիք:

5. Այս աւանդութիւնը թւում է, թէ ուզում է Ջօջանց տան Սասմայ Ծռերի Բեռի Թորոսին կապել Կիլիկեան Թորոսների հետ. որ մենք տարիներառաջ նախատեսել ենք: (Արարատ. ամսագիր 1907 Դեկտեմբեր, էջ 869. Վաղարշապատ):